

ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

1. Դիմում- հայտ,
2. Իրավասու մարմնի որոշում կամ քաղվածք որոշումից՝ երաշխիք վերցնելու և գույքը գրավադրելու վերաբերյալ,
3. Հիմնադիր փաստաթղթերի պատճենները՝ կանոնադրությունը իր հետագա բոլոր փոփոխություններով և լրացումներով հանդերձ, Պետական ռեգիստրի գրանցման վկայականը իր ներդիրներով, ներառյալ ընկերության տնօրենի վերաբերյալ տեղեկության ներդիրը , հարկային կողը (ՀՀՎՀ),
4. Տեղեկանք Պետ. ռեգիստրից կանոնադրության փոփոխության և մասնակիցների վերաբերյալ, ինչպես նաև Բաց Բաժնետիրական Ընկերության համար՝ տեղեկանք տրված Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից, Փակ Բաժնետիրական Ընկերության համար՝ տեղեկանք տրված բաժնետերերի ռեստր վարողի կողմից,
5. Տնօրենի անձնագրի և սոց. քարտի պատճեն և անհրաժեշտության դեպքում 25% փայամասնությունը գերազանցող բաժնետերերի անձնագրի և սոց. քարտի պատճենները,
6. Սեփականատերերի, մասնակիցների, բաժնետերերի և նրանց հետ փոխկապակցված անձանց վերաբերյալ գրավոր տեղեկանք՝ անուն, ազգանունը (անվանումը), գտնվելու կամ բնակվելու հասցեն, ձեռնարկատիրական գործունեության բոլոր տեսակները: Սույն Կարգի իմաստով փոխկապակցված են համարվում «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածով նախատեսված անձինք (անհրաժեշտության դեպքում),
7. Տվյալ ոլորտում գործունեություն իրականացնելու համար թույլատրող անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները՝ լիցենզիաներ, սերտեֆիկատներ, հավաստագրեր և այլն,
8. Տեղեկանք ՏՀՏ-ից բյուջեի հանդեպ առկա պարտավորությունների վերաբերյալ (ըստ անհրաժեշտության),
9. Տեղեկանք դեբիտորական և կրեդիտորական պարտքերի վերաբերյալ (ըստ անհրաժեշտության),
10. Հիմնական միջոցների ցուցակ մնացորդային արժեքով, սպրանքանյութական պաշարների մնացորդ՝ հումք, նյութեր և պատրաստի արտադրանք (ըստ անհրաժեշտության),
11. Ֆինանսական հաշվետվությունները մինչև վերջին հաշվետվու տարվա տարեկան և տվյալ տարվա սկզբից եռամսյակային ֆինանսական հաշվետվությունները՝ ընդունված ՏՀՏ-ի կողմից,
12. Մրցույթին մասնակցելու առաջարկ (մրցույթի մասնակցության երաշխիքի դեպքում) կամ հաղթող ճանաչվելու վերաբերյալ ծանուցում (կանխավճարի կամ աշխատանքների կատարման երաշխիքի դեպքում), կնքված պայմանագիր (հետավարտական երաշխիքի կամ պայմանագրում փոփոխություն կատարելու դեպքում)
13. Գործող գործակալական, իրացման, մատակարարման և այլ պայմանագրեր և համաձայնագրեր:

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՐԱՎԱԴՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ

14. Սեփականության վկայական (բնօրինակ),
15. Սեփականության իրավունքի հիմքը,
16. 3-րդ անձի գույքը գրավադրման դեպքում հիմնադիր փաստաթղթերի պատճենները՝ կանոնադրությունը իր հետագա բոլոր փոփոխություններով և լրացումներով հանդերձ, Պետական ռեգիստրի գրանցման վկայականը իր ներդիրներով, ներառյալ ընկերության տնօրենի վերաբերյալ տեղեկության ներդիրը , հարկային կողը (ՀՀՎՀ) և իրավասու մարմնի որոշումը գույքը գրավադրելու մասին,
17. Տեղեկանք «ՀՀ ԿԱ Անշարժ Գույքի Պետական Միասնական Կադաստր»-ի տարածքային ստորաբաժանումից՝ գրավադրվող գույքի սահմանափակումների վերաբերյալ (ներկայացվում է երաշխիքի տրամադրման դրական որոշման դեպքում),
18. Համապատասխան լիցենզիա ունեցող անձի կողմից կազմված գնահատման հաշվետվություն,

ԱՅԼ ԳՈՒՅՔԻ ԳՐԱՎԱԴՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ

19. Գույքի ցանկը՝ նշելով չափի միավորը, քանակը, հաշվեկշռային արժեքը, և ձեռք բերման փաստաթղթերը,
20. Ավտոմեքենայի դեպքում տեխնիկական անձնագիրը (բնօրինակ),
21. 3-րդ անձի գույքը գրավադրման դեպքում հիմնադիր փաստաթղթերի պատճենները՝ կանոնադրությունը իր հետագա բոլոր փոփոխություններով և լրացումներով հանդերձ, Պետական ռեգիստրի գրանցման վկայականը իր ներդիրներով, ներառյալ ընկերության տնօրենի վերաբերյալ տեղեկության ներդիրը , հարկային կողը (ՀՀՎՀ) և իրավասու մարմնի որոշումը գույքը գրավադրելու մասին, (իրավաբանական անձանց դեպքում)
22. Կազմակերպության պահանջի դեպքում համապատասխան լիցենզիա ունեցող անձի կողմից կազմված գնահատման հաշվետվություն,

ԱՅԼ ԼՐԱՅՈՒՅԻՉ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ, ՈՐՈՆՅ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՈՇՈՒՄ Է ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ

23. Կազմակերպությունը կարող է պահանջել ապահովագրել գրավի առարկան կորստյան և վնասվածքի ռիսկերից, ներկայացնել դրա հետ կապված անհրաժեշտ փաստաթղթեր:
24. Անհրաժեշտության դեպքում այլ լրացուցիչ փաստաթղթեր: